«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ՎԱՆԱՁՈՐԻ Ա. ԽԼՂԱԹՅԱՆԻ ԱՆՎԱՆ

N 18 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»

ՊՈԱԿ

ՏԱՐԵԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2021-2022 ՈՒՍՏԱՐԻ

Ըստ ԴԶԾ 2020-2025թթ-ի և հաստատության ներքին գնահատման վերլուծության՝
կազմեց դպրոցի գործադիր տնօրեն Թազուհի Մարզպետունու Թադևոսյանը

Հավանության է արժանացել Վանաձորի
Ա. Խլղաթյանի անվան N 18 միջնակարգ
դպրոցի մանկավարժական խորհրդի
31.08. 2021 թ.-ի N 2 նիստով

Տնօրեն՝ Թ. Թադևոսյան

Հաստատված է Վանաձորի
Ա. Խլղաթյանի անվան N 18 միջնակարգ
դպրոցի կառավարման խորհրդի
-- .--. 2021 թ.-ի N- նիստով

Խորհրդի նախագահ՝ Է. Վարդանյան
քարտուղար՝ Ա. Կոստանդյան

Դպրոցի անձնագիրը

Ընդհանուր տեղեկություն

Հանրակրթական հիմնական անվանումը	<<Վանաձորի Ա. Խլղաթյանի անվան N 18 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ
Հիմնարկության տիպը	Հանրակրթական
Երբ է հիմնադրվել	1930թ.
Իրավաբանական և փաստացի հասցեն	2020, ՀՀ, Լոռու մարզ, Ք. Վանաձոր, Երևանյան խճուղի 151
Լիցենզիա	808-Ա ՀՀ կառավարության որոշմամբ 814-Ա/Բ ՀՀ ԿԳՆ-ի հրամանով
Հեռախոս	(0322) 3-78-09
e-mail	vanadzor18@schools.am
Ղեկավարի պաշտոնը	Տնօրեն
Ազգանուն, անուն, հայրանուն	Թադևոսյան Թագուհի Մարզպետունու
Լիցենզիա	Սերիա Ա N 0003220
Հանրակրթական հիմնարկության կառուցվածքը	Եռաստիճան՝ տարրական (I-IV), միջին (V-IX), ավագ(X-XII)
Արտոնագիր (Լիցենզիա)	Տարրական՝ սահմանային 344 տեղ Հիմնական՝ սահմանային 430 տեղ Միջնակարգ՝ սահմանային 258 տեղ

ՊՈԱԿ-ի ռեսուրսային բազա

Տարածքը՝ 10.3 հա, որից շենքը՝ 6080,4 քառ. մետր
Շենքի կառուցվածքը՝ տիպային
Մարզադահլիճ՝ 310 քառ. մետր
Հանդիսությունների դահլիճ՝ 270 քառ. մետր
Արհեստանոց՝ 54 քառ. մետր
Տեխնիկական զինվածություն՝ համակարգիչներ -22 դյուրակիր , այլ՝ 8+6Արմաթի, էլ. գրատախտակ-1, պատճենահանման և տեսաներածող սարք-6, պրոեկտոր-2, տեսահեռուստասարքավորումներ-1 , ռադիոհանգույց -14 կետով, տեսանկարահանման համակարգ-26կետով
Դպրոցի գրադարանային ֆոնդ՝ 7710

ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Առաքելությունը կազմակերպության ցանկալի ապագայի մտապատկերն է: **Անհրաժեշտ է և պետք է լինել**

- Դպրոց բոլորի համար. որտեղ կարող են հաջողությամբ սովորել և՛ ԿԱՊԿ ունեցող, և՛ սովորական, և՛ օժտված երեխաները (կրթության անհատականացման, ներառականացման շնորհիվ յուրաքանչյուր երեխա ունակ է սովորելու՝ ունենալով զարգացման իր հետագիծը)
- Կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ որակյալ կրթություն ստանալու համար անհրաժեշտ պայմաններ ունեցող դպրոց
- Ստեղծողի դպրոց. ընդ որում յուրաքանչյուրը պետք է գիտակցի, որ դպրոցի զարգացումը կախված է հենց իրենից
- Դպրոց, որի շրջանավարտը կողմնորոշված է կամ բավարար հմտություններ և քաղաքացիական պատրաստվածություն ունի կրթությունը շարունակելու, ինքնուրույն աշխատանքային գործունեություն ծավալելու համար
- Համայնքի հետ ակտիվ համագործակցող, համայնքի սոցիալ-մշակութային կենտրոն հանդիսացող դպրոց

Պետք է համապատասխան դարձնել կրթությունը այսօրվա երեխայի կյանքին, ապրած ժամանակին ու իր անհատական կարիքին՝ վերացնելով դպրոցը կյանքից բաժանող արգելքները: Դպրոցում իրականացվող կրթական ծրագիրը պետք է սովորողների և սովորեցնողների համատեղ ուսումնահետազոտական աշխատանքի պայման և արդյունք լինի: Դպրոցը ոչ միայն պետք է նախապատրաստի երեխային կյանքին, այլ նա արդեն իսկ պիտի ապրի այսօր և ինչպես ինքը՝ կյանքը, լինի անընդհատ, իրական:

Պետք է նպաստել սովորողի կյանքի, կարիերայի, ուսումնառության հարատև առաջընթացին՝փոփոխվող տնտեսական միջավայրում և ձևավորվող գլոբալ ինովացիոն հասարակական պայմաններում:

Պետք է ձգտել աշխարհին պարգևել նոր թումանյաններ ու կոմիտասներ, Նոբելյան մրցանակակիրներ, Արշիլ գորկիներ, գյուլբենկյաններ, խաչատրյաններ, համբարձումյաններ,փարաջանովներ ու ազնավուրներ…

ԿԱՐԳԱԽՈՍ

Փոխադարձ վստահության, միջանձնային հարաբերությունների գործընկերության ողջ պաշարով ապրել և գործել լիարժեք աջակցության ռեժիմում

Լինել համերաշխ, ներառող, տնտեսող, պահպանող, զարգացող-զարգացնող, ավելի ունակ և նախաձեռնող

ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցը գործում է հիմնանորոգված , նորառաճ տիպային շենքում : Դպրոցն ունի հանդիսությունների դահլիճ, մարզադահլիճ, պարասրահ, գրադարան-ընթերցասրահ, Արմաթ ինժեներական լաբորատորիա, Յչկահավորված լաբորատորիա, ճաշարան և բուֆետ, բուժկետ , 21 սանհանգույց, ջեռուցման,ազդանշանային, ռադիո, տեսանկարահանման համակարգեր:
2021թ.-ի օգոստոս ամսվա դրությամբ դպրոցում վարչական աշխատողների թիվը 3 է, աշխատակիցների թիվը՝ 67: Աշակերտների ընդհանուր թիվը 675 է / 25 դասարաններում/: ԿԱՊԿ ունեցող և վկայագրված աշակերտների թիվը 26 է : Դպրոցում գործում են խորհրդակցական մարմիններ. մանկավարժական խորհուրդ, որում ընդգրկված են բոլոր մանկավարժական աշխատողները, 6 առարկայական մեթոդմիավորում, կառավարման խորհուրդ, ԱԽ, ԾԽ:
2020-2021 ուստարում դպրոցը աշխատել է միահերթ,6-օրյա աշխատանքային ռեժիմով:
2021-2022 ուստարում դպրոցը աշխատելու է միահերթ,5-օրյա աշխատանքային ռեժիմով:

<u>Ընդհանուր տվյալներ ուսուցիչների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար</u>

Ցուցանիշը	2018-2019 ուստարի	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	Փոփոխություն ների դինամիկան (աճ կամ նվազում)
Ուսուցիչների ընդհանուր թիվը	48	46	46	հաստատուն
Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը կամ դրույքաչափը	17.6	16.4	16.5	աճ

<u>Տվյալներ ուսուցիչների տարիքային բաշխվածության վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար</u>

Ուսուցիչների թիվը	2018-2019 ուստարի	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Մինչև 30 տարեկան	4	4	5	աճ
31-ից 40 տարեկան	14	14	14	հաստատուն
41ից -50 տարեկան	17	15	12	նվազում
51-ից -55 տարեկան	6	4	3	նվազում
56 տարեկան և ավելի	7	9	12	աճ

Դասարանների թիվը՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Դասարանների թիվը	2018-2019 ուստարի	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
1 -ին դասարան	2	2	2	հաստատուն
2-րդ դասարան	3	2	2	հաստատուն
3-րդ դասարան	3	2	2	հաստատուն
4-րդ դասարան	3	3	3	հաստատուն
5-րդ դասարան	2	2	2	հաստատուն
6-րդ դասարան	2	2	2	հաստատուն
7-րդ դասարան	2	2	2	հաստատուն
8-րդ դասարան	2	2	2	հաստատուն
9-րդ դասարան	2	2	2	հաստատուն
10-րդ դասարան	1	2	2	հաստատուն
11-րդ դասարան	1	1	2	աճ
12-րդ դասարան	1	1	1	հաստատուն
Ընդամենը	24	23	24	աճ



Ըստ դասարանների՝ սովորողների թիվը ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Դասարանների թիվը	2017-2018 ուստարի	2018-2019 ուստարի	2019-2020 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
1 -ին դասարան	3	2	2	հաստատուն
2-րդ դասարան	3	3	2	նվազում
3-րդ դասարան	3	3	3	հաստատուն
4-րդ դասարան	2	3	2	նվազում
5-րդ դասարան	2	2	2	հաստատուն
6-րդ դասարան	2	2	2	հաստատուն
7-րդ դասարան	2	2	2	հաստատուն
8-րդ դասարան	2	2	2	հաստատուն
9-րդ դասարան	2	2	2	հաստատուն
10-րդ դասարան	2	1	2	աճ
11-րդ դասարան	1	1	1	հաստատուն
12-րդ դասարան	1	1	1	հաստատուն
Ընդամենը	25	24	23	նվազում



Հնարավորություններ	Վտանգներ
1. Ժամանակակից պահանջներին համապատասխան որակյալ կրթության ապահովում, շրջանավարտների մասնագիտական կողմնորոշում *2. Դասավանդողների կարողությունների շարունակական զարգացում, մասնագիտական հեղինակության և սոցիալական ապահովության մակարդակի բարձրացում (ԿԾ)* *3. Նյութատեխնիկական բազայի բարելավում, նոր գույքի և սարքավորումների ձեռքբերում* *4. Վճարովի ծառայությունների մատուցում, ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում. արտաբյուջեի ձևավորում* *5.Կրթամշակութային առնչությունների հաստատում, կամուրջների հիմնում, գործընկերների ներգրավում* *6. Նոր ակումբների հիմնում՝ սովորողների մասնագիտական կողմնորոշման և մոտիվացման նպատակով*	*Համավարակը* *Շահառուների ուղղորդվածությունը՝ մոտիվացիան* *Անբավարար ֆինանսական միջոցները* *Պայմանավորվածությունները չիրագործելը* *Նյութական աջակցություն չստանալը*

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Յանկալիի և իրականի միջև հակասությունը

Առարկայական կաբինետների, լաբորատորիաների, ուսումնական (ֆիզիկական) մեդիամիջավայրի անբավարարությունը (ինչը խանգարում է ժամանակակից կրթական պահանջների բավարարմանը. սովորողների մասնագիտական կողմնորոշման և հետագա կրթության համար նախադրյալների ձևավորմանը)

Շահառուների /ուսուցիչների և աշակերտների/ մոտիվացիան, շահագրգռվածությունը ստեղծագործ ուսուցման գործընթացում

Օժտված երեխաների հետ անբավարար աշխատանքը

Դպրոցի կառավարման գործում համայնքի, ծնողների ակտիվ ներգրավվածության մակարդակը

Դպրոցի ֆինանսական սահմանափակ հնարավորությունները

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՉԱՓՈՎ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ)

Նպատակները ուղենիշ են խնդիրների պլանավորման համար: Խնդիրները բխում են նպատակներից, ավելի մասնավոր են, քան նպատակները: Որևէ նպատակից բխող խնդրի լուծումը պետք է հանգեցնի դպրոցի զարգացմանը:

Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր

- Ապահովել ԿԳՄՄՆ-ի կողմից հաստատված պարտադիր գործածության օրինակելի փաստաթղթերի համապատասխանությունը դպրոցի կառուցվածքային առանձնահատկություններին:
- Մշտապես զարգացնել դպրոցի տնօրենի և նրա տեղակալների կարողությունները՝ օրինակելի փաստաթղթերի հիման վրա դպրոցական փաստաթղթեր ստեղծելու համար :
- Բարձրացնել դպրոցավարության տեսանելիությունը, թափանցիկությունը, հեղինակությունը՝ համակարգելով իրավական և այլ փաստաթղթերի տեղադրումը, դրանց վարումը պաշտոնական կայքերում:

Կառավարման և խորհրդակցական մարմիններ

Մշակել, իրականացնել այնպիսի գործունեություն, որ դպրոցի կառավարման խորհրդի լիազորությունները և իրավունքները ակտիվորեն իրացվեն հետևյալ ուղղություններով.

- նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ որոշումների ընդունում,
- կրթության պետական կառավարման մարմնին դպրոցի զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում...

Պետք է կարողանալ գնահատել և ժամանակին միջոցներ ձեռնարկել խորհրդակցական մարմինների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու, ձևական գործընթացները դադարեցնելու համար: Այդ նպատակով անհրաժեշտ է՝

- դպրոցի կառավարման գործում բարձրացնել ԾԽ-ի և ԱԽ-ի *(ոչ թե սովորողների համար, այլ սովորողների հետ)* ակտիվ ներգրավվածության մակարդակը,
- դպրոցի բոլոր խորհրդակցական մարմինների գործունեությունը շարունակել դարձնել մասնակցային

Բյուջետային հնարավորություններ

Զարգացնել տնօրենի տնօրենի և հաշվապահի /կարողանա աշխատել ՀԾ-ով/ կարողությունները՝ դպրոցի բյուջեում ֆինանսական մուտքերը և դրանց փոփոխությունները կանխատեսելու, նախահաշիվ կազմելու, ֆինանսական միջոցները նախահաշվին համապատասխան ծախսելու, հաշվետվություններ կազմելու համար

Հանրայնորեն քննարկել բյուջետային հնարավորություններն ու բաշխումները

Անհրաժեշտ քայլեր ձեռնարկել դպրոցի բյուջետային հատկացումները ավելացնելու, արտաբյուջե ձևավորելու և այլ միջոցներ հայթայթելու ուղղությամբ

Աշակերտական համակազմ

«Յուրաքանչյուր երեխա իր ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացման համար անհրաժեշտ կենսամակարդակի իրավունք ունի»

ՄԱԿ-ի Կոնվենցիա ԵԻՄ՝ հոդված 21/1/

- Մոնիթորինգների անցկացում սովորողների շրջանում՝
  ա/ դպրոցավարության և կրթության որակի հայտորոշման-գնահատման, բ/ ԱԽ-ը մասնակցային մարմին դարձնելու նպատակներով
- Սովորողների մասնագիտական կողմնորոշման և հետագա կրթության համար անհրաժեշտ նախադրյալների շարունակական զարգացում
- Սովորողների առողջության պահպանմանն ուղղված ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարելագործում
- Անջրպետի վերացում դպրոցականի և արտադպրոցականի միջև
- Դպրոցում այնպիսի հոգեբանական-մանկավարժական միջավայրի ձևավորում, որը թույլ կտա յուրաքանչյուր աշակերտի իր հնարավորություններին, հակումներին համապատասխան յուրացնել կրթական ծրագիրը և լինել հաջողակ

Մանկավարժական համակազմ

Դասավանդողների կարողությունների շարունակական զարգացում, մասնագիտական հեղինակության բարձրացում (ԿԾ)

- Կատարել մանկավարժական համակազմի առկա ներուժի գնահատում՝ կրթական ծրագրերի որակի ապահովման և զարգացման պլաններին համապատասխանության տեսակետից
- Նպաստել դպրոցի մանկավարժական համակազմի մասնագիտական որակավորման շարունակական բարձրացմանը, ինչը դպրոցի ռազմավարություններից մեկն է. այն ենթադրում է ՀՀ կառավարության 14.10.2010 թ. N 1391- Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջների կատարում

- Հասնել նրան, որ յուրաքանչյուր ուսուցիչ տիրապետի համակարգչային ծրագրերին և կարողանա օգտվել դրանցից: Այդ նպատակով կազմակերպել մեդիահմտությունների, ՏՀՏ վերապատրաստման դասընթացներ նաև դպրոցում
- Մշտապես զարգացնել դպրոցի ուսուցիչների կարողությունները սովորողների տարիքային հոգեբանությունը ճանաչելու, երեխայի իրավունքները հարգելու, նրանց հետ արդյունավետ աշխատելու համար, դպրոցում զարգացնել հոգեբանական ծառայությունը՝ սովորողներին և ուսուցիչներին անհրաժեշտ խորհրդատվություն տրամադրելու, նրանց օգնելու և դասարանում առաջացող խնդիրների լուծմանն աջակցելու համար:
- Կազմակերպել բազմաբնույթ ձևաչափերով մասնագիտական, մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ, ուսուցիչներին հաղորդակից դարձնել մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպել սեմինարներ, մանկավարժական, մեթոդական ընթերցումներ, վարպետաց դասեր
- Խրախուսել մանկավարժական համակազմի ինքնակրթությունը, գիտական և մանկավարժական շարժունությունը
- Աջակցել մանկավարժներին մշակել և տպագրել իրենց մեթոդական աշխատանքների արդյունքների վերաբերյալ նյութերը, ստեղծել համապատասխան պայմաններ փորձարարական, նախագծային-հետազոտական աշխատանքներ իրականացնելու համար
- Հմուտ, առարկայական խորը պատրաստվածություն ցուցաբերած նորարար, ստեղծարար ուսուցիչներին դիտարկել որպես վերապատրաստող մենթորներ
- Նպաստել մանկավարժների հեղինակության բարձրացմանը, ուղղորդվածությանը՝ մոտիվացիային, ներդնել խրախուսման, պարգևատրման ճկուն մեխանիզմներ

Ուսումնական միջավայր

- Առարկայական կաբինետների, լաբորատորիաների հարստացում, կահավորում նոր գույքով, սարքավորումներով ապահովում
- Հասարակական այնպիսի հարաբերությունների ձևավորում, որոնք համապատասխանում են երեխաների իրավունքներին և ժողովրդավարական դպրոցի գաղափարներին /մասնակցային դպրոց, առանցքային կոմպետենցիաների ձևավորմանն

- Սովորողների / տարրական օղակի// համար տաք սննդի կազմակերպում

- ՈՒսումնական պլանի համապատասխանեցում դպրոցում սովորողների կարիքներին
- Դպրոցի դաստիարակության համակարգի կատարելագործում՝

առարկայական դասընթացներում հզորացնելով դաստիարակության մասը, ծնող-դպրոց կապը հզորացնելով

Դպրոցի համագործակցությունը

Դպրոցի զարգացման գործում ծնողների և համայնքի ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացում

Ուսուցիչ-աշակերտ- ծնող նախագծերի ստեղծում. օրինակ՝ ուսումնական ճամփորդություններ, բլոգ՝ «Մենք ենք ու մեր 18-րդ դպրոցը» …

Գործընկերների ներգրավում, համագործակցության շրջանակների ընդլայնում, տեղական և միջազգային կազմակերպություններին միացում, այդ թվում՝ Վանաձորի զինկոմիսարիատին, Բլեյան բաց ցանցին …

Կրթության որակը

Կրթությունը անձի, հասարակության, պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու և սերունդներին փոխանցելու համար
<<Կրթության մասին>> ՀՀ օրենք /հոդված 11, կետ 1.9/

Կրթության բովանդակությունը ապահովում է ազգի զարգացման նոր մակարդակ ապահովող ժամանակակից անհատի և քաղաքացու ձևավորումը
<<Կրթության մասին>> ՀՀ օրենք /հոդված 11, կետ 2,3/

Կրթության որակը կարելի է ավելի բարձրացնել՝բացահայտելով իրավիճակը գնահատելու միջոցով այն փոփոխելու հնարավորություններ: Անհրաժեշտ է դիտարկել հետևյալ գործոնները.
ա)ուսումնական գործընթացի փաստացի վիճակը,
բ)կրթական գործընթացի կատարողականը,
գ) կրթական գործընթացի արդյունավետությունը,
դ)կրթական գործընթացի որակը կրթական աստիճաններում,
ե)դասերի, ուսումնական միջոցառումների որակը:

- Բաց, մոբիլ, կանխատեսելի կրթական համակարգի դինամիկ զարգացում
- Կրթության որակի շարունակական բարձրացում

- Աշխատանքային կարգապահության բարձրացում
- Կրթության որակի ներքին գնահատման համակարգի կատարելագործում

Նորարարություն և տեխնոլոգիաներ

- ՏՀՏ -ների կիրառման միջոցով ուսուցման արդյունավետության բարձրացում
- Խելացի գրատախտակով, սարքավորումներով դասասենյակի ավելացում
- Առարկայական կաբինետների, լաբորատորիաների վերազինում, վիրտուալ լաբորատորիաների հիմնում. սեփական ուսումնամեթոդական բազայի / նաև էլեկտրոնային/ ստեղծում
- <<Ծնողը՝ վերապատրաստող>> նախագծի ներդրում
- Պարբերաբար մոնիթորինգներ անցկացնելու մշակույթի կիրառում
- Նախագծերով ուսուցում, երբ ուսուցման վայրն է ոչ միայն դպրոցը, այլ նաև համացանցը, թանգարանը, ցուցասրահը, համերգային դահլիճը, գիտական լաբորատորիան, բնության, պատմության հուշարձանը,ընտանիքը, փողոցը
- Նոր ակումբների հիմնում՝անգլախոսների, քիմիկոսների, երաժշտասերների, մարզիկների, բլոգ-TV, հայրենագիտական, Տիեզերք-ակումբ (սովորողների անհատական առաջընթացի ապահովում)
- Ուսումնադաստիարակչական պարապմունքների կազմակերպման այլ ձևերի կիրառում՝ պլեներ, ստուգատես, ցուցահանդես, համերգ

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. **Հանրակրթության օրենսդրությամբ** հանրակրթական պետական ծրագրերով ուսումնական հաստատության համար **սահմանված** նպատակների ու խնդիրների իրականացման ուղղություններ (կանոնակարգվում են կրթության որակի, համապատասխանության ու շարունակականության հիմնահարցերը)

2. Հանրակրթական այլընտրանքային (միջազգային, փորձարարական, հեղինակային) ծրագրերով դպրոցի կողմից իրականացվելիք առանձին բովանդակային, կրթական

տեխնոլոգիաների կամ ուսուցման կազմակերպման ոչ ավանդական ձևերի ուղղությամբ նախատեսված **նորարարական ծրագրավորված ուղղություններ**

Նորամուծությունը դպրոցում իրականացվելու է հետևյալ փուլերով՝

- տեղեկատվության հավաքագրում և իրավիճակի վերլուծում,
- կարիքների որոշում,
- շահառուների (սովորող, ուսուցիչ, ծնող) կողմից որոշման ընդունում,
- նորամուծության կիրառում և դպրոցի կրթական մշակույթում նորամուծության զարգացման շարունակական աջակցության ապահովում:

Թե որքանով է նպատակահարմար տվյալ նորամուծությունը կիրառել կոնկրետ դպրոցում, նույնպես գնահատման կարիք ունի: Դրա չափանիշներն են՝ նորամուծության **արդիականությունը, հրատապությունը, օգտակարությունը և իրականանալիությունը**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Գործողությունների պլանավորման փուլերը	Գործողությունները
Նախապատրաստական փուլ	Ռեսուրսների գնահատում Ռիսկերի, արգելքների, սահմանափակումների գնահատում Կանոնների, դերերի որոշում, համաձայնության ստացում Նյութատեխնիկական հիմնավորման մշակում Հանձնարարությունների հստակեցում
Հիմնական փուլ	Հանձնարարությունների բաշխում, ժամկետների որոշում Պոտենցիալ ռեսուրսների վերածումը իրականի Հանձնարարությունների կատարում Միջանկյալ գնահատում, անհրաժեշտ փոփոխությունների իրականացում

Գործողություններ	Ակնկալվող արդյունք	Ժամկետ, կատարողներ	Հնարավոր ֆինանսական ծախսը
Դպրոցական սեղան-աթոռների, գրասեղանների, պահարանների նորացում, ձեռքբերում	Ամբողջ շենքի հզորությամբ և հարմարավետությամբ կծավալվի ուսումնական գործընթացը	2021-2022 թ. Դպրոց, կառավարման խորհուրդ, լիազոր մարմին	1.500.000

Ռազմագիտության կաբինետի կահավորում, վերազինում	Ռազմահայրենասիրական դաստիարակության և ուսուցման արդյունավետության բարձրացում	2021-2022 Դպրոց	500000
ՏՀՏ վերապատրաստման դասընթացների կազմակերպում դպրոցում՝ հրավիրված մասնագետների կողմից	1.ՏՀՏ-ի կիրառումը դարձնել առօրեական 2.Մշտապես զարգացնել ուսուցիչների համակարգչային գրագիտությունը, դասապրոցեսում ՏՀՏ-ների կիրառման կարողությունները 3.Ակտիվորեն կիրառել ,,Սմարթ,, դասասենյակի ողջ հնարավորությունը ուսումնադաստիարակչա-կան գործընթացում 4.Տիրապետել մասնագիտական և մանկավարժական առաջավոր փորձին	2021-22ուստարի, ուսուցիչ-մենթորներ	
Երթևեկության արգելապատնեշի տեղադրում դպրոցի դարպասի դիմաց	Ապահովել սովորողների անվտանգ երթևեկությունը	2021-2022թ Քաղաքապետար.	-
Պարգևավճարների սահմանում	1.Խթանել օլիմպիադաներին, մրցույթներին արդյունավետ մասնակցությունը 2.Մոտիվացնել ուսուցչին	Տարեկան առնվազն 1 անգամ, դպրոց	50000-100000 դրամ օլիմպիադայի հաղթող մասնակից պատրաստած ուսուցչին
1. Ֆիզկուլտուրայի հրապարակի կառուցում դպրոցի բակում 2. Հանդիսությունների դահլիճի, ուսուցչական աթոռների, ճաշարանի	Խթանել առողջ ապրելակերպը, կ րթական հարմարավետ միջավայր ունենալ	2022-2023 թթ	2 000 000

աթոռների ձեռքբերում			
1. Առարկայական կաբինետների, լաբորատորիաների վերազինում 2. Համագործակցային, գործընկերային շփումների կազմակերպում այլ դպրոցների, քոլեջների, ԲՈՒՀ-երի հետ	1.Բարձրացնել բնագիտական առարկաների դասավանդման որակը, նաև մոտիվացիա և հետաքրքրություն առաջացնել 2. Կողմնորոշել շրջանավարտին մասնագիտության ընտրության հարցում	Դպրոց, խորհուրդ, կրթության լիազոր մարմին, ԿԳՄՄՆ /ծրագրեր կամ դրամաշնորհներ/ 2021-2023թիվ	ԿԳՄՄՆ –ի ԾԻԳ
Ամառային դպրոց-ճամբարի կազմակերպում	*Մատուցել համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման ծառայություն* *Կազմակերպել երեխաների ազատ ժամանակը անձնային աճի և զարգացման ուղղությամբ*	Դպրոց, համայնք	2022-23թ-ից

Ռիսկերը	Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները
Դպրոցի աշխատակազմի մասնագիտական պատրաստվածության մակարդակի խոչընդոտներ	Մանկավարժներին ընդգրկել վերապատրաստման դասընթացներում՝ մասնագիտական և մանկավարժական պատրաստվածության մակարդակը բարձրացնելու նպատակով, կազմակերպել դասալսումներ, նաև՝ փոխադարձ, գործուղել վերապատրաստումների, կազմակերպել բաց դասեր, օրինակելի դասեր Կազմակերպել թրեյնինգներ , դասընթացներ ոչ ուսուցչական կազմի համար՝ մարկետինգային արշավներ, մամլո հաղորդագրություններ, սոցմեդիա, ռեսուրսների զարգացում, առաջարկ-նամակներ գործիքակազմերին տիրապետելու նպատակով
Ծնողական համայնքի կողմից դպրոցի գործունեության մասնակցության պասիվություն	Խրախուսել ծնողական նախաձեռնությունները Ներգրավել ծնողներին դպրոցական կյանքի մեջ Ներդնել <<Ծնող- վերապատրաստող>> նախագիծը
Սովորողների մոտիվացիա	Ձևավորել կրթական մեդիամիջավայր սովորողների հետ, վերացնել դպրոցականի և արտադպրոցականի միջև անջրպետը, ձևավորել նոր ակումբներ, կազմակերպել սնունդը, սահմանել կրթաթոշակներ, խրախուսել նախագծային, հետազոտական ծրագրերի իրականացումը սովորողների կողմից
Դպրոցի ֆինանսական սահմանափակ հնարավորություններ, առկա գերածախս	Ձևավորել արտաբյուջե . ձեռնարկատիրական գործունեություն, լրացուցիչ ֆինանսավորում, ծրագրեր, հիմնադրամներ, դրամաշնորհներ, նվիրատվություններ
Ուսումնական/ ֆիզիկական/ միջավայրի խոչընդոտներ.ազայի ոչ բավարար հագ Նյութատեխնիկական բ	Հարստացնել նյութատեխնիկական բազան, վերազինել համակարգչային նոր դասասենյակներ, ստեղծել ժամանակակից լաբորատորիաներ, տեխնոլոգիայի կաբինետ, ժամանակակից ընթերցասրահ, թարմացնել ռեսուրս-կենտրոնը

ԴԶԾ-ի կատարումը վերահսկում է այն հավանության արժանացրած դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն:
<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենք /հոդված 11, կետ 1.9/

ԴԶԾ-ի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը 5-ամյա այդ ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են:

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԸ

Ճանապարհային քարտեզում մուգ և բաց տողերով առանձնացվում են ԶԾ-ի իրականացման փուլերը: Եթե աշխատանքի ընթացքում կատարվել է նկարագրված քայլը, ապա քայլի հերթական համարից հետո արված գծի վրա դրվում է (+) նշանը:

1. + Զարգացման ծրագրի ստեղծում տնօրենի թափուր տեղի համար մրցույթին մասնակցելու համար

2.+ Զարգացման ծրագրի հաստատում մանկավարժական խորհրդի նիստում

3.+ Զարգացման ծրագրի հաստատում խորհրդի նիստում

4.+ Առաջին ուսումնական տարվա աշխատանքային պլանի մշակում

5.+_ Առաջին ուսումնական տարվա ներքին գնահատում

6.+_ Զարգացման ծրագրի վերանայում՝ ըստ ներքին գնահատման արդյունքների

7.+Փոփոխված զարգացման ծրագրի հաստատում մանկավարժական խորհրդի նիստում

8.+ Զարգացման ծրագրի հաստատում խորհրդի նիստում

9.___ Երկրորդ ուսումնական տարվա աշխատանքային պլանի մշակում

10.___ Երկրորդ ուսումնական տարվա ներքին գնահատում

11.___ Զարգացման ծրագրի վերանայում՝ ըստ ներքին գնահատման արդյունքների

12.___ Փոփոխված զարգացման ծրագրի հաստատում մանկավարժական խորհրդի նիստում

13.___ Զարգացման ծրագրի հաստատում խորհրդի նիստում

14.___ Երրորդ ուսումնական տարվա աշխատանքային պլանի մշակում

15.___ Երրորդ ուսումնական տարվա ներքին գնահատում

16.___ Զարգացման ծրագրի վերանայում՝ ըստ ներքին գնահատման արդյունքների

17.___ Փոփոխված զարգացման ծրագրի հաստատում մանկավարժական խորհրդի նիստում

18.___ Զարգացման ծրագրի հաստատում խորհրդի նիստում

19.___ Չորրորդ ուսումնական տարվա աշխատանքային պլանի մշակում

20.___ Չորրորդ ուսումնական տարվա ներքին գնահատում

21.___ Զարգացման ծրագրի վերանայում՝ ըստ ներքին գնահատման արդյունքների

22.___ Փոփոխված զարգացման ծրագրի հաստատում մանկավարժական խորհրդի նիստում

23.___ Զարգացման ծրագրի հաստատում խորհրդի նիստում

24.___ Հինգերորդ ուսումնական տարվա աշխատանքային պլանի մշակում

25.___ Հինգերորդ ուսումնական տարվա ներքին գնահատում

26.___ Զարգացման ծրագրի վերանայում՝ ըստ ներքին գնահատման արդյունքների

27.___ Փոփոխված զարգացման ծրագրի հաստատում մանկավարժական խորհրդի նիստում

28.___ Զարգացման ծրագրի հաստատում խորհրդի նիստում